ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի նոյեմբերի 30-ին կնքված N «ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/01-1» ծածկագրով պայմանագրում 2022 թվականի մարտի 23-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ N **22/01-1-1** երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառներ**. Փոփոխությունը պայմանավորված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ առանց ֆինանսական միջոցների առկայության, գնման գործընթացի կազմակերպման և ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2121-Ն որոշմամբ հատկացված համապատասխան ֆինանսական միջոցներով:

**Փոփոխության նկարագրություն**" ապրանքների մատակարարումն իրականացնելու նպատակով նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ և կողմերի միջև կնքված համաձայնագրով լրամշակվել է Հավելված 2-ը՝ մատակարարման ժամանակացույցը (կցվում է) և Հավելված 3-ը՝ վճարման ժամանակացույցը (կցվում է):

**Փոփոխության հիմնավորում**. համապատասխան ֆինանսական միջոցների առկայություն, 24 հունվարի 2022թ. կնքված N N «ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/01-1» գնման պայմանագրի 8.5-րդ և 8.15-րդ կետերի, և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման 18-րդ կետ:

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայություն

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 22/01-1-1**
**N ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/01-1 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ**
**ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

*ք. Երևան* *23 ճապր 2022 թ.*

Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն), ի դեմս գլխավոր քարտուղար Անի Բաղդասարյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, «Տելեկոմ Սիստեմս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արթուր Շատվորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, միասին անվանվելով նաև Կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով 2021թ. նոյեմբերի 30-ին «Տելեկոմ Սիստեմս» ՍՊԸ-ի հետ կնքված «ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/01-1» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15-րդ կետերի դրույթները՝ Պայմանագրի Կողմերը համաձայնեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Հաստատել մատակարարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի (Հավելված 2):
1"1.2 Հաստատել ֆինանսական միջոցների վճարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի (Հավելված 3):

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Պայմանագրի մյուս դրույթները թողնել անփոփոխ:

2.2 Սույն Լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 30.11.2021թ. կնքված № «ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/01-1» Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո մինչև 20-ը դեկտեմբերի 2022թ. ներառյալ:

2.3 Սույն Լրացուցիչ համաձայնագիրը կնքված է երկու հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակից՝ յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
| --- | --- |
| ՀՀ պետական վերահսկողական ծառայություն | «Տելեկոմ Սիստեմս» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի պող. 47 | ք. Երևան, Չայկովսկու փ. 30/3 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011021954 | Հ/Հ 2050622067301001 |
| ՀՎՀՀ 00183253 | ՀՎՀՀ 02634658 |
| Գլխավոր քարտուղար՝ | Տնօրեն՝ |
| ---------------- Ա. Բաղդասարյան | ---------------- Ա. Շատվորյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 3*
*«30» նոյեմբերի 2021 թ. կնքված*
*«ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/01-1» ծածկագրով պայմանագրի*
*«23» մարտի 2022 թ. կնքված N 22/01-1-1 համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 48761100/501 | Հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթների | | | | | | | | | | | 1234796.4 | 1234796.4 | **1234796.4** |
| Ընդամենը | | | | | | | | | | | 1234796.4 | | | | **1234796.4** |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պետական վերահսկողական ծառայություն
ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի պող. 47
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011021954
ՀՎՀՀ 00183253

Գլխավոր քարտուղար՝

________________ Ա. Բաղդասարյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Տելեկոմ Սիստեմս» ՍՊԸ
ք. Երևան, Չայկովսկու փ. 30/3
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050622067301001
ՀՎՀՀ 02634658

Տնօրեն՝

________________ Ա. Շատվորյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«30» նոյեմբերի 2021 թ. կնքված
«ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/01-1» ծածկագրով պայմանագրի
«23» նոյեմբերի 2022 թ. կնքված N 22/01-1-1 համաձայնագրի

# ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Մատակարարման | | | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | չափման միավորը | միավորի գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը (ՀՀ դրամ) | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 1 | հատ | 10289.97 | 1234796.4 | 120 | ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 47 | 120 | Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո մինչև 20-ը դեկտեմբերի 2022թ. |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պետական վերահսկողական ծառայություն
ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի պող. 47
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011021954
ՀՎՀՀ 00183253

Գլխավոր քարտուղար՝

________________ Ա. Բաղդասարյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Տելեկոմ Սիստեմս» ՍՊԸ
ք. Երևան, Չայկովսկու փ. 30/3
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050622067301001
ՀՎՀՀ 02634658

Տնօրեն՝

________________ Ա. Շատվորյան
/ստորագրություն/
Կ.Տ